

Մեծ Սեպասար

Վարչական ղեկավար՝ Նորայր Պողոսյան

Հեռ 0 9 3 3 5 1 1 8 6

Մակերես՝ 19.2կմ²

Բնակչություն՝ 933

metssepasar.shirak@mta.gov.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ներկայիս անվանումը –Մեծ Սեպասար

Համայնքի պատմական անվանումները- Շիշթափա

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1828-30թ.

Որ համայնքներին է սահմանակից համայնքը –Աշոցք, Ղազանչի, Թավշուտ, ՓոքրՍեպասար, Կրասար
Համայնքի նշանավոր մարդիկ –

Հակոբյան Լևոն Գյումրու Երկաթգծի հիվանդանոցի մանկաբույժ,

Հակոբյան Մանվել մոսկվայում մանկաբույժ,

Մելիքյան Վիհլեմ Ամասիայում վիրաբույժ,

Մելիքյան Գոռ Էրեբունի հիվանդանոցում վիրաբույժ,

Հովհաննիսյան Հովիկ թիվ 1 կլինիկայում վիրաբույժ,

Թովմասյան Աղասի գյումրիում ռենգենոլոգ

Կրթական հաստատություններ – Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց

Բնակչության հիմնական զբաղմունքը – անասնապահություն

Հոգևոր կառույցներ–Սուրբ փրկիչ եկեղեցի, Մանուկ Խաչմատուտ, Դարի սուրբ սրբավայր

Պատմական ակնարկ

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 6-7կմ արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 40կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Շիշթափա, Շիշթափա Առաջին, Շիշթափա Հայի, Շիշթափա Հայկական, Շիշտապա Ներքին, Ջերմուկ անվանումները: Մեծ Սեպասար է վերանվանվել 1946 թ-ին:

Գյուղը գտնվում է Կաթսայաջուր կամ Ղազանչի /կաթսա ժողովրդական բարբառով՝ դազան, որտեղից էլ անվանումը մնացել է Ղազանչի/ գետի հովտում մեղմաթեք սարավանդում՝ ծովի մակարդակից

1990մ բարձրության վրա: Կիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղի տարածքում կան սառնորակ աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր:

Գյուղում եղել են մասնակի ավերվածությունների 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Ունի միջնադարյան ս. Ամենափրկիչ եկեղեցին, շրջակայքում պահպանվել են հին ամրոցի, բնակատեղիի մնացորդներ:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-30թթ գաղթել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 64, 1897 թ-ին՝ 620, 1926թ-ին՝ 893, 1939 թ-ին՝ 1161, 1959 թ-ին՝ 761, 1979 թ-ին՝ 846, 1989 թ-ին՝ 930 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 933 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 30%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 204 տնտեսություն: Ունի նորակառույց դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (726հա), խոտհարքերը (118հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 173 և 704 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Մեծ Սեպասար
Ինդեքս՝ 2807